

Հայաստանի Հանրապետության անտառների վերականգնման և զարգացման
հիմնադրամի (ՀՀԱՎԶՀ) հոգաբարձուների խորհրդի նիստի

ք. Երևան

12 փետրվարի 2010 թ.

| Նախագահում էր Հոգաբարձուների նախագահ՝ Տ. Մարգարյան Մասնակցում էին | խորհրդի | ՀՀ վարչապետ |
|---|---------|--|
| Գ. Ալավերդյան | | ՀՀ գյուղատնտեսության նախարար |
| Ա. Հարությունյան | | ՀՀ բնապահպանության նախարար |
| Ե. Զախարյան | | ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ |
| Տ.Մարգարյան | | Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ |
| Վ. Տերտերյան | | ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ |
| Ռ. Ալավերդյան | | ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ |
| Ա. Քոչարյան | | ՀՀ Լոռու մարզպետ |
| Ա. Ղուլարյան | | ՀՀ Տավուշի մարզպետ |
| Ս. Սահակյան | | ՀՀ Արագածոտնի մարզպետ |
| Վ. Մաթևոսյան | | ՀՀ Վայոց ձորի մարզպետ |
| Մ. Մաթևոսյան | | «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գլխ. տնօրեն |
| Հ. Մանասարյան | | Կանաչների միության նախագահ |
| Կ. Դանիելյան | | Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի նախագահ |
| Վ. Մովսիսյան | | ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն |
| Կ. Մարգարյան | | ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ |
| Ա.Մարգարյան | | ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ |

Լ. Գրիգորյան

ՀՀ անտառների վերականգնման և զարգացման
հիմնադրամի գլխավոր հաշվապահ

Ա. Գասպարյան

ՀՀ կառավարության աշխատակազմի
տարածքային զարգացման և
բնապահպանական վարչության փորձագետ

**1. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր
տնօրենի 2009 թվականի հաշվետվությունը՝ հիմնադրամի
ֆինանսատնտեսական գործունեության մասին**

(Վ. Մովսիսյան, Ն. Մանասարյան, Կ. Դանիելյան, Տ. Սարգսյան)

Ընդունելի գիտություն և հաստատել՝ ՀՀ անտառների վերականգնման
և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 2009թ. հաշվետվությունը
հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին :

**2. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2009թ.
ֆինանսական հաշվետվության մասին:**

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

Ընդունելի գիտություն և հաստատել՝ ՀՀ անտառների
վերականգնման և զարգացման հիմնադրամի 2009թ. ֆինանսական
հաշվետվությունը:

**3. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2010թ.
հաստիքացուցակի և գործադիր մարմնի պահպանման
(վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշվի մասին:**

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

Ընդունել ի գիտություն և հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2010թ. հաստիքացուցակը և գործադիր մարմնի պահպանման (վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշիվը՝ 16290,25 հազար դրամ գումարով:

4. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2010թ. իրականացվելիք ծրագրերի և ֆինանսավորման աղբյուրների մասին՝

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանի կողմից ներկայացվել են առաջարկություններ «Ծիծեռնակաբերդ հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնման» (3-րդ փուլ) ծրագրի շրջանակներում 20 հեկտարի վրա ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացման մասին (առաջարկությունը կցվում է) և Շիրակի մարզի անտառվերականգնման համալիր ծրագրի շարունակման շրջանակներում 25 հեկտար տարածքի անտառապատման և ցանկապատման մասին:

Որոշվեց՝ 1. Հաստատել «Ծիծեռնակաբերդ հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնման» (3-րդ փուլ) ծրագրի շրջանակներում 20 հեկտարի վրա ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացման ծրագիրը՝ 28,7 մլն. դրամ արժեքով:

Հաշվի առնելով աշխատանքների շարունակականությունն ու հրատապությունը, թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին

«Ծիծեռնակաբերդ հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնման» (3-րդ փուլ) ծրագրի շրջանակներում 20 հեկտարի վրա ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման և ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպություններին ընտրել բանակցությունների միջոցով:

2. Հաստատել Շիրակի մարզի անտառվերականգնման համալիր ծրագրի շարունակման շրջանակներում 25 հեկտար տարածքի անտառապատման և ցանկապատման ծրագիրը՝ 22,8 մլն.դրամ արժեքով.

Հաշվի առնելով աշխատանքների շարունակականությունն ու հրատապությունը, թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին Շիրակի մարզի անտառվերականգնման համալիր ծրագրի շարունակման շրջանակներում 25 հեկտար տարածքի անտառապատման և ցանկապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման և անտառապատման ու ցանկապատման աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպություններին ընտրել բանակցությունների միջոցով:

3. ՀՀ գյուղատնտեսության նախարար Գ. Ալավերդյանին և ՀՀ Ֆինանսների նախարար Տ. Դավթյանին՝ 15-օրյա ժամկետում ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրինության հետ քննարկել և ներկայացնել առաջարկություն սույն արձանագրության 3-րդ և 4-րդ կետերով

նախատեսված աշխատանքների ֆինանսավորման աղբյուրների
վերաբերյալ:

ՀՀ վարչապետ

Հոգաբարձուների խորհրդի նախագահ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ անտառների վերականգնման և
զարգացման հիմնադրամի գործադիր
տնօրեն

ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ